սացք։ Ցետոյ տրուած է յունածէս հռովմէագաւան Ռուսաց կամ ռնիիրից, որք և նուիրած են յանուն Աքանչելագործ հայրապետին, սոքա այսինքն ունիթք 1840, մայիսի 15, Ռուսաց սինոդին հպատակելով. անցած է Հայոց եկեղեցիս Ռուսաց ձեռքը, ուր կը պատարագեն ցարդ նոցա երիցունք։ Այս եկեղեցին նշանաւոր է ազգիս համար այնու ևս, զի գերեզման է սա ազգիս բազմավիշտ հայրապետաց մէկուն, Մելքիսեդեկ Կաթողիկոսի, որ թողով կաթողիկոսական աթոռը, չորս տարի վարած է յԻլվով թեմական եպիսկոպոսի պաշտօն, և ապա գալով 'ի Կամենից վախճանած է, 18 մարտի 1627ին. և թաղուած է այս եկեղեցւոյս մէջ, աւագ խորանին աջակողմը, հիւսիսային պատին ներքև, ուր ցարդ կ'երևի պատին վրայ խորաքանդակ արձանը՝ ննջման ձևով, գլուխը հայրապետական թագ. յաջին աւետարան։ Ցապանաքարին չորս կողմը երկաթագիր կաթուղիկոսի անունը անվերծանելի էր, զի ինչպէս մահարձանը՝ նոյն և տապանագիրը ծածկուած գտայ կրախառն կարմրագոյն ներկով։

Աւետման եկեղեցիէն քիչ հեռու, դէպ 'ի մեծ Հայոց հրապարակը, Հայոց փողոցին վրայ կանգուն կեցած է երբեմն Ս. Նիկողայ, այժմ Վերափոխման փառաւոր եկեղեցին Հայոց, որ յիրաւի՝ իւր մեծութեամբ, փառաւոր ճակատովն, վայելուչ և բոլորաձև կաթուղիկէիս. բարձրաբերձ և լայնանիստ զանգակատամբ, շշափելի և յայտնի կը ցուցընէ՝ զինքը կանգնողաց ճոխութիւնը, զարգացեալ ճաշակը, որ և միակ յիշատակ և արձան մնացած է Կամենիցի Հայոց մեծագանձ հարստութեան։ Դեռ ևս անտիպ, այլ վաւերական մագաղաթեայ կտակագիր մի, որ վերջերս գտնուած